ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՊԱՏՎՈԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ

Սովետական և համաշխարհային գիտության զարգացման գործում մեծ է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ներդրած ավանդը: Ակադեմիայի կոլեկտիվի ձեռք բերած նվաճումները լենինյան պատգամների իրականացման, ժողովրդին ու կուսակցությանը հարազատորեն ծառայելու լավագույն օրինակ են: Հայ գիտնականները նոր խոշոր հաջողությունների հասան Վ. Ի Լենինի ծննդյան 100-ամյակի պատվին ծավալված սոցիալիստական մրցության մեջ: Այդ մրցությունում բարձր ցուցանիշների հասնելու համար ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան արժանացավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, ՀՍՍՀ Մինիստրների սովետի և ՀԱՄԽ-ի Լենինյան հոբելյանական պատվոգրի:

Ապրիլի 17-ին, հոբելյանական պարգևը հանձնվեց ՀՍՍՀ ԳԱ կոլեկտիվին: Այդ առթիվ կայացավ ՀՍՍՀ ԳԱ հանդիսավոր ընդհանուր ժողով, որը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար Գ. Ս. Դավթյանը:

Բացելով ժողովը, նա ասաց, որ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան արժանացել է Լենինյան հոբելյանական պատվոգրի: Նա ԳԱ կոլեկտիվի անունից խորին գոհունակությամբ նշեց, որ այդ բարձր պարգևը հանձնում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը:

Ընկ. Ա. Ե. Քոչինյանը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի անունից շնորհավորեց հայ գիտնականներին, գիտությունների ակադեմիայի ամբողջ կոլեկտիվին՝ Լենինյան հոբելյանական պատվոգրով պարգևատրվելու առթիվ: Նա ասաց, որ անչափ ուրախ է, որ իրեն բախտ է վիճակվել մեր ակադեմիային՝ մեր ժողովրդի պարծանքին, այսօր հանձնել Լենինյան հոբելյանական պատվոգիր: Մեր Ակադեմիան ստեղծվեց 1943 թ. հայրենական պատերազմի ահեղ ժամանակ, երբ որոշվում էր մեր երկրի բախտը, և այդ ծանր օրերին մեր կուսակցությունը՝ նրա Կենտկոմը ճիշտ կիրառելով լենինյան պատգամները ազգային քաղաքականության վերաբերյալ, հեռատես լինելով մի փոքր հանրապետությունում ստեղծեց գիտական օջախ, որը այսօր ՍՍՀՄ ակադեմիաների շարքում դարձել է առաջավորներից մեկը: Մեր ակադեմիան իրոք անգնահատելի ծառայություններ ունի հանրապետության էկոնոմիկայի, մշակույթի, գիտության զարգացման ասպարեզում: Առանց առաջավոր գիտության, այս գիտա-տեխնիկական հեղափոխության դարում հնարավոր չէ կյանքի զարգացումը, որևէ առաջընթաց:

Հանձնելով պատվոգիրը, ընկ. Ա. Քոչինյանը հույս և վստահություն է հայտնում, որ հայ գիտնականները հետագայում ևս կաշխատեն առավել մեծ ջանքերով, մեր երկրին կտան այն, ինչ պահանջում է և ինչ սպասելիքներ ունի նրանցից մեր աշխատավոր ժողովուրդը:

Գիտությունների ակադեմիայի կոլեկտիվի աշխատանքը բարձր պարգևով նշելու համար կուսակցությանն ու կառավարությանը երախտագիտություն խոսք ասացին հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Գ. Հովհաննիսյանը և Վ. Հ. Գուլքանյանը:

Նրանք հայ գիտնականների անունից խորին գոհունակություն և շնորհակալություն հայտնեցին մեր կուսակցությանը և կառավարությանը այդ բարձր պարգևի համար և հավաստիացրին, որ հայ գիտնականները լի են մեր ժողովրդի վստահությունը արդարացնելու վճռականությամբ և իրենց բոլոր ուժերը կգործադրեն մեր գիտության առջև դրված մեծ և պատասխանատու խնդիրների կատարման համար:

Այնուհետև ընկ. Ա. Քոչինյանը ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Մկրտչյանին, Գ. Դավթյանին, Մ. Ջրբաշյանին, Ծ. Աղայանին, Հ. Մաղաքյանին, Վ. Գուլքանյանին, Հ. Բունյաթյանին, Ա. Նազարովին, Ա. Ղարիբյանին, Ս. Համբարձումյանին և ՀՍՍՀ ԳԱ նախագահության գիտական քարտուղար Հ. Ավետիսյանին հանձնեց «Քաջարի աշխատանքի համար: Ի նշանավորումն Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 100-ամյակի» հոբելյանական մեդալներ:

ՀՍՍՀ ԳԱ հանդիսավոր ընդհանուր ժողովի մասնակիցները մեծ ոգևորությամբ ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված Հայաստանի կոմկուսի Կենտկոմին, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին:

* * *

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կոլեկտիվը մեկն է Սովետական Միության այն երկու հազար հինգ հարյուրականներից, որոնք Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ ծավալված սոցիալիստական մրցության մեջ ձեռք բերած բարձր ցուցանիշների համար արժանացել են ՍՄԿԿ ԿԿ-ի, ՍՍՀՄ Մինիստրների սովետի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՀԱՄԿԽ-ի Լենինյան հոբելյանական պատվոգրին:

Իր հիմնադրման օրից ԳԱ պատմության ինստիտուտը զբաղվում է հայ ժողովրդի կազմավորման ու զարգացման պատմության բազմաթիվ ու բազմազան հարցերով: Այսօր էլ նույն եռանդով սովետահայ պատմաբանները շարունակում են հայագիտության մեծ երախտավորների գործերը, խորամուխ են լինում մեր ժողովրդի պատմության կնճռոտ հարցերի մեջ:

Անգնահատելի է պատմության ինստիտուտի դերը՝ մեր ժողովրդի գիտական ամբողջական պատմությունը ստեղծելու ուղղությամբ: Հենվելով հայ պատմագրության հարուստ անցյալի և սովետահայ պատմագրության ձեռք բերած մեծ նվաճումների վրա, սովետահայ պատմաբանները ավարտին են հասցնում հայ ժողովրդի պատմությունը բազմահատորյակը: Ութ հատորում շարադրվող պատմությունը մեր անցյալի յուրահատուկ հանրագիտարանն է:

ԳԱ պատմության ինստիտուտի գործունեության մեջ առաջնակարգ տեղ է գրավում լենինյան գաղափարների պրոպագանդան, Վ. Ի. Լենինի՝ հայ ժողովրդի ազատարարի դերի բացահայտումն ու վերհանումը:

Ապրիլի 15-ին գիտությունների ակադեմիայի նիստերի փոքր դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Լենինյան հոբելյանական պատվոգիրը պատմության ինստիտուտին հանձնելուն: Նիստը ներածական խոսքով բացեց ինստիտուտի կուսբյուրոյի առաջին քարտուղար Հ. Հ. Ազիզբեկյանը:

ՀԿԿ ԿԿ քարտուղար Ռ. Հ. Խաչատրյանը ՀԿԿ ԿԿ-ի, ՀՍՍՀ Մինիստրների սովետի, ՀՍՍՀ Գերագույն սովետի և ՀԱՄԽ-ի անունից ջերմորեն շնորհավորեց կոլեկտիվին՝ բարձր պարգևի առթիվ և հետագա հաջողություններ մաղթեց: Բուռն ծափահարությունների ներքո, նա Լենինյան հոբելյանական պատվոգիրը հանձնեց ինստիտուտի դիրեկտոր, պրոֆ. Գ. Ա. Գալոյանին:

ՀՍՍՀ ԳԱ նախագահության անունից կոլեկտիվին շնորհավորեց ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը:

Շնորհավորական ջերմ խոսքեր ասացին ակադեմիկոսներ Աշ. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը, Ս. Երեմյանն ու պրոֆ. Գ. Գազոյանը: Նրանք ինստիտուտի կոլեկ-

տիվի անունից հավաստիացրին, որ կանեն ամեն ինչ, հայրենի գիտության հետագա զարգացման ու բարգավաճման համար: Վերջում ընթերցվեցին ՍՍՀՄ ԳԱ նախագահությունից, ՀՍՍՀ ԳԱ նախագահությունից ու միութենական հանրապետություններից պատմության ինստիտուտի հասցեով ստացված բազմաթիվ շնորհավորագրեր:

Ժողովի մասնակիցները միաձայն ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿԿ ԿԿ-ին, ՍՍՀՄ Մինիստրների սովետին, ՍՍՀՄ Գերագույն սովետին ու ՀԱՄԿԽ-ին, ինչպես նաև ՀԿԿ Կենտկոմին, ՀՍՍՀ Մինիստրների սովետին, ՀՍՍՀ Գերագույն սովետին և ՀԱՄԽ-ին:

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 25-ԱՄՅԱԿԻՆ

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի մայիսի 6-ի գիտական նստաշրջանը նվիրված էր Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 25-ամյակին: Բացելով նիստը, ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Գալոյանն անդրադարձավ ֆաշիստական Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակի պատմական նշանակությանը:

«Սովետական Միության դերը հակաֆաշիստական բլոկի հաղթանակի գործում» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանը: Զեկուցողը ցույց տվեց, որ երկրորդ համաշխարհային պատերազմում ՍՍՀՄ խաղացած վճռական դերով էին պայմանավորված իմպերիալիստական պատերազմի վերաճումը ազատագրականի, ֆաշիստների կողմից օկուպացված երկրներում ծավալված դիմադրական շարժումները և մի շարք ժողովուրդների ու պետությունների հակահիտլերյան կոալիցիայի ստեղծումն ու ամրապնդումը: Այնուհետև պրոֆ. Ա. Մ. Հակոբյանը քննադատեց ֆաշիզմի ջախջախման գործում Սովետական Միության դերը նսեմացնող արևմտյան ռազմագետներին ու պատմաբաններին:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ն. Մնացականյանի զեկուցումը նվիրված էր հայ ժողովրդի մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին: Զեկուցողը նշեց, որ հայ ժողովուրդը թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում իր ուժերի գերագույն լարումով մասնակցեց Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմին, դրսևորելով իր բարոյական բարձր հատկանիշները: Նրա խիզախ զավակներն երբեք այնպիսի զանգվածային հերոսություններ չէին կատարել, ինչպես մեծ Հայրենականի օրերին: Նրանցից 106-ը արժանացան Սովետական Միության հերոսի բարձր կոչման, ավելի քան 66. 802 հայ ռազմիկներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով: Զեկուցման վերջում պրոֆ. Ա. Ն. Մնացականյանը խոսեց Հայրենական մեծ պատերազմում Սովետական Հայաստանի թիկունքի աշխատավորության ներդրած ավանդների մասին:

Հայրենական մեծ պատերազմում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակում մեծ ու փառավոր է եղել նաև պարտիզանական շարժման դերը,— նշեց պատմական գիտությունների թեկնածու Ե. Մ. Խալեյանը: Պարտիզանական շարժումը համարելով հայ ժողովրդի գոյատևման դարավոր պայքարի հիմնական ձև, զեկուցողը ցույց տվեց, որ 1941—1945 թթ. մեծ թվով հայ պարտիզաններ մարտնչել են Ուկրաինայում, Բելոռուսիայում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում: Ապա, նա անդրադարձավ հայկական առանձին պարտիզանական ջոկատների ստեղծմանը և հայ պարտիզանների քաջագործություններին:

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

տիվի անունից հավաստիացրին, որ կանեն ամեն ինչ, հայրենի գիտության հետագա զարգացման ու բարգավաճման համար: Վերջում ընթերցվեցին ՍՍՀՄ ԳԱ նախագահությունից, ՀՍՍՀ ԳԱ նախագահությունից ու միութենական հանրապետություններից պատմության ինստիտուտի հասցեով ստացված բազմաթիվ շնորհավորագրեր:

Ժողովի մասնակիցները միաձայն ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿԿ ԿԿ-ին, ՍՍՀՄ Մինիստրների սովետին, ՍՍՀՄ Գերագույն սովետին ու ՀԱՄԿԽ-ին, ինչպես նաև ՀԿԿ Կենտկոմին, ՀՍՍՀ Մինիստրների սովետին, ՀՍՍՀ Գերագույն սովետին և ՀԱՄԽ-ին:

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 25-ԱՄՅԱԿԻՆ

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի մայիսի 6-ի գիտական նստաշրջանը նվիրված էր Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի 25-ամյակին: Բացելով նիստը, ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Գալոյանն անդրադարձավ ֆաշիստական Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակի պատմական նշանակությանը:

«Սովետական Միության դերը հակաֆաշիստական բլոկի հաղթանակի գործում» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանը: Զեկուցողը ցույց տվեց, որ երկրորդ համաշխարհային պատերազմում ՍՍՀՄ խաղացած վճռական դերով էին պայմանավորված իմպերիալիստական պատերազմի վերաճումը ազատագրականի, ֆաշիստների կողմից օկուպացված երկրներում ծավալված դիմադրական շարժումները և մի շարք ժողովուրդների ու պետությունների հակահիտլերյան կոալիցիայի ստեղծումն ու ամրապնդումը: Այնուհետև պրոֆ. Ա. Մ. Հակոբյանը քննադատեց ֆաշիզմի ջախջախման գործում Սովետական Միության դերը նսեմացնող արևմտյան ռազմագետներին ու պատմաբաններին:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ն. Մնացականյանի զեկուցումը նվիրված էր հայ ժողովրդի մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին: Զեկուցողը նշեց, որ հայ ժողովուրդը թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում իր ուժերի գերագույն լարումով մասնակցեց Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմին, դրսևորելով իր բարոյական բարձր հատկանիշները: Նրա խիզախ զավակներն երբեք այնպիսի զանգվածային հերոսություններ չէին կատարել, ինչպես մեծ Հայրենականի օրերին: Նրանցից 106-ը արժանացան Սովետական Միության հերոսի բարձր կոչման, ավելի քան 66. 802 հայ ռազմիկներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով: Զեկուցման վերջում պրոֆ. Ա. Ն. Մնացականյանը խոսեց Հայրենական մեծ պատերազմում Սովետական Հայաստանի թիկունքի աշխատավորության ներդրած ավանդների մասին:

Հայրենական մեծ պատերազմում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակում մեծ ու փառավոր է եղել նաև պարտիզանական շարժման դերը,— նշեց պատմական գիտությունների թեկնածու Ե. Մ. Խալեյանը: Պարտիզանական շարժումը համարելով հայ ժողովրդի գոյատևման դարավոր պայքարի հիմնական ձև, զեկուցողը ցույց տվեց, որ 1941—1945 թթ. մեծ թվով հայ պարտիզաններ մարտնչել են Ուկրաինայում, Բելոռուսիայում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում: Ապա, նա անդրադարձավ հայկական առանձին պարտիզանական ջոկատների ստեղծմանը և հայ պարտիզանների քաջագործություններին:

ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ